

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍՏԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՔՂՔԱԿՅՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Է ՈՒՂՂԱՆ, ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի
ԳԱՀԻՐԷ

Նամակառուցի Թիւ. 117

DIRECTION DU JOURNAL
NOR-OR

CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ-ՕՐ

Լ Ր Ա Ք Ի Ր

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գրքերի համար	Տարեկան	50
» »	Վեցամսեայ	30
Շրջակայից »	Տարեկան	60
» »	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍՏՄԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Փետր	18
Վեցամսեայ	»	10

ՌՈՒՍՏՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԽԻԿ Է

ԵՒ ԲՂՁԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ

Թերթին Վարչութեանը վրայ է:

Չեռագրիներն եւ չեն դարձուիր: ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արտոմատէր, ժ. ՄԻՒՆԻԹԷ:

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Ա Ղ Ք Ա Տ Ն Ե Ր Ը

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Մեր տոհմիկները, հեռի սպրեկով ազգային շրջանակէն, կը փորձուին յաճախ խորհելու թէ՛ իրենց գոնեւոր բախող աներեաները՝ ստուար մասը կը կազմեն գաղթականութեան նոր տարրին, — հինը պարկեշտ կը նկատեն, որովհետեւ իրենք ալ հիներէն են — ու այդ նոր տարրէն կ'ուժանան. աստի՛ թագուն ու զսպուած արհամարհանք մը դէպ ի նոր ձեռնարկները, որ հին կարգերն ու բարքերը փոփոխելու բնութիւնն ունին. աստի՛ անվտանգութիւն մը դէպ ի նորակազմ ընկերութիւնները. աստի՛ ատելութեան մտնեցող հակակրանք մը դէպ ի բոլոր ինչ որ հայկական է: Սակայն, արդար չէ՛ այս Անկախութիւն է գառնել ամբողջութիւնը՝ մասնաւորներու վրայ տեսնուած երեւոյթէն: Երբ լրջօրէն քննենք գաղթականութեան պարագաներն ու շարժառիթները, սիտի վարանինք հապճեպով տալու վճիռ մը, որ աննպաստ ըլլայ բոլոր գաղթականներուն համար ալ: Բռնաւորին հալածանքը բերաւ հոս թափեց այդ տարագիրները, որոնց վրայէն դեռ կուգար հոսը դեռահեղ արիւնին ու գեռածուխ մոխրին. անոնք կ'Պուսէն կուգային ու գաւառներէն. անոնք՝ դժոխքէն փախածներն էին ու գերեզմաններէն, և կ'երազէին գանձել Եգիպտոսի մէջ ապաստան մը, ուր կարենային հանգչեցնել իրենց փոթորկակոծ գլուխը. կային որ չ'ունէին պատու մը հացի դին, գոնէ որ մ'ալ ապրեցնելու համար մասուղալ որբուկները. այրիներ կային, տարագիրներու երամին մէջ, որ կոտորածի սարսուռը հետերին բերած էին, ու կը փորձէին պահ մը մոռնալու իրականութիւնը, տեսնելով՝ բարեբաղդ և շարդերու սահմաններէն ծովով անջատ խումբ մ'անձնուէր ազգայիններ, որոնք գլխութեան ակնարկ մը կը շորհէին ատոնց, անքիկ այրիներուն գիրկը ժպտող հրեշտակիկներուն...:

Մարդասիրական օգնութիւններու լեզմաւոր շրջանն եղաւ 1896ի աշունը, որ անեց գրեթէ մէկ տարի. այս մէկ տարուան մէջ քանի մը հազար սկիներ բաշխուեցան գաղթականաց, որոնք ա՛յնքան առատօրէն տրուեցան կարօտեալներուն:

Այս ամենը՝ լուսազոյն վկայական է որ կրնայ տրուիլ եգիպտաբնակ հին գաղթականութեան, դէպ ի նորը ցոյց տուած եղբայրութեան համար:

Սակայն, այդ գումարները, ա՛յնքան առատօրէն բաշխուած ու տեսնուեն ու հագստաները

չ'էրն կրնար այլապէս գործածուելով՝ աւելի օգտակար ու տեղական արդիւնք մ'արտադրել: Ա՛յն ատեն, երբ տարագրելոց Մասնախումբ մը կը գործէր հոս, ուրիշ Մասնախումբ մ'ալ Աղէքսանդրիա, Եղա՛ն գործնական ու փորձ գաղթականներ, որոնք փափաք յայտնեցին, ո՛րը բերանացի, ո՛րը գրաւոր գիմուսներով, եգիպտական այդ երկու կեդրոններուն մէջ հաստատուելու մէկ հարուստանոցներ, ուր աշխատէին, իրենց վաստակովը ապրէին ու իրենց ընտանիքն ապրեցնէին բոլոր արհեստաւորները. դերձակ, կոշակար, հիւսն, ներկարար, դարբին, սափրիչ, ձուլիչ, փորագրիչ, ժամագործ ևն. ևն. ու այս երկու արուեստանոցները գիրքին էր հիմնել, ա՛յնչափ ատեն ու ա՛յնչափ անխոհեմօրէն սպառուած գումարներուն վրայ դոյն յաւելում մ'ընելով. ինչ որ անկարելի չ'էր, երբ աչքի յառնէ բերենք անհատական նպաստները, որոնք արուեստանոցներու մեծահարուստ գերդաստաններու կողմէն, որոնց մէջ, — գաղթականութիւնը պէտք է որ մտնեցած չ'ըլլայ — առաջին տեղը կը բռնէ գլխութեան գիւցաղուհի մը, նախանձիկ և նմանիկ օրինակ մեր Ազնուափայլներուն, Տիկին մ'ա՛յնքան ազնիւ ու ա՛յնքան անձանձիր, որ չ'էր յոգնիր անձամբ իսկ գիմնելու անմատչելի տեղեր, լսկ ի սէր և յօգնութիւն գաղթականներուն: Շատ այրեր, կարծրասիրտ ժայռեր, գութի և կան տեսնելով իրենց ընկերուհիներուն անձնախրութիւնն ու ապրեցնող գործունէութիւնը, ի վերջոյ մտան նպաստողներու խումբին մէջ, կարևոր գումարներ ստորագրեցին ու . . . տունն ալ, ինչ որ բարենիշ մ'է բաղդատամբ մեր այն փարթաւներուն, որոնք խոշոր գումարներ՝ ազդին կամ քաղաքի մը կտակած, բայց յետոյ . . . կատակած են, շնորհով իրենց ստորագրութիւնը . . . :

Այս հակիրճօրէն ու անցողակի պատմութեան գիրքին է հետեցնել ուրեմն թէ՛ Եգիպտոսայոց մէջ կա՛յ տակաւին նմանիկներու, համարիւններու, համակրօններու սէրը. չէ՛ տակաւին մարած կրակը սրտերուն մէջ, որ կ'զգան ու կը վշտակրին լսելով կամ տեսնելով ազգակիցներու տառապագին կացութիւնը:

Արդ, թշուառութիւնը միշտ կա՛յ ու սպաստներու թիւը կ'աճի օրէ օր, քանի որ սպրեկու պայմանները տարբեր են հոս, չա՛տ տարբեր՝ մեր ցարդ կրած պայմաններէն: Հետեւաբար, միակ մտածումը զոր պէտք է ունենան ոչաղքատները, կամ բառին փափուկ իմաստովը, գիրակեցիկները, պիտի կեդրոնանայ մէկ կէտի վրայ, որուն շուրջը պիտի հաւաքուին բոլոր սոհ-

մային համակրութիւններն ու ձեռնտուութիւնները: Այդ կէտը, այդ կեդրոնը, չը վարանինք խոստովանելու, Աղքատախնայ մն է, նորակազմ ընկերութիւնը, որուն պաշտօնն է թիթկեցնել ցաւը, սփոփել թշուառութիւնը, դարմանել աղքատութիւնը, — լոկ նիւթականը, քանի որ մտաւորականը դեղ չ'ունի — հաւասար բերել յուսահատը, վերջապէս բարձրացնել ու ազնուացնել ժողովուրդը:

Հ Մ Մ Ի Ի Ն

Ինչ որ էի եւ երբեմն, ա՛ ա՛ղ, այն չ'եմ ալ հիմայ. Թաւաղորած կուլայիր, ինչպիսիք վեր առի քեզ, Ու՛ սէրդ այնպէս ինձ արկած, եզայ՛ կամայ, ակամայ, Ուրիշներուն՝ ծանակի նիւթ. իսկ քեզի՛ ողջակեզ:

Այլեւ ճանիճ մ'է ներկայս քու արցունքովդ գոյացած, Տիկինրու մէջ հոս ո՛ հոն կը խորհարիմ փոսէ փոս, Չոր կէտ մը չ'եմ գտներ բն'աւ, արեսս է միշտ միգամած. Նշուլիկ մ'ի՛նձ չ'արձակիր ու չ'ցամքիր շուրջս, ս խ'սոս:

Ճարահատած, երբուն, անյեանարան կը խորհիմ . . . Ուր որ ձեռքերս կ'երկարեմ, փուշ է միայն ու մացառ, Ո՛չ բարեկամ կը տեսնեմ, ո՛չ ընկեր, ո՛չ մտերիմ, Ի՛նձ, դո՛ւն անգամ խոստումներդ գրծած, ինձմէ հեռացար:

Գու ինձ առջի հանդիպումդ՝ երազ մ'ի՛նքսին զուարճ ու պերճ, Ոսկեղինիկ կենցաղի մ'նախաշաւիղն կարճեցի, Ու սեպեցի աշխարհի երջանիկն իս անկէ վերջ:

Յագուրդ սիրոյդ բոցերուն, ա՛խ, չ'կրցի գուշակել, Թէ հրապոյրներդ այն բոլոր թոյներ լինին օր մ'ի՛նձի, Իսկ գուն՝ օձ մը սողացող զրախտիս մէջ անարգել:

Ու ճանչցայ քեզ, ու ճանչնալս օգուտ չ'ունի ալ հիմայ, Մինչ դուն՝ վարսերդ ալիծուի ուսերդ վար անամիտի, Սրահէ սրբաւ, մասմաբուր կը ցոլցըլաս . . . ես ահա Տեխերուդ մէջ կ'եղեամիմ գանգուրներս հոճ ու խոպոպ:

Բարիկ 25 Յունիս 1900

ՊՕԷՐՆԵՐՈՒ ԱՆԿԱՌՈՒԹԻԱՆ ՀԱՄԱՐ

Բարիկի մէջ մասնախումբ մը կազմուեցաւ որուն նպատակն է առաջ բերել ընդարձակ շարժում մը ի նպաստ Պօէրներուն. այդ շարժումը միայն Թրանսայի մէջ չ'պիտի շրջափակուի, այլ միջազգային գոյն մ'առնելու է: «Պօէրներու անկախութեան համար» Մասնախումբը, որուն մէջ բաւական թուով քաղաքական անձնաւորութիւններ կան, համաձայն գործակցութիւն մը պիտի ունենայ այն Մասնախումբերու հետ որոնք

արդէն մինչոյն նպատակով հիմնուած են Ռուսաստանի, Գերմանիոյ, Աւստրիոյ, Միացեալ-Նահանգաց և նոյն իսկ Անգղիոյ մէջ:

Այս ֆրանսական Մասնախմբին մասնակցող քաղաքական անձնաւորութիւններէն 10 հատը նախկին մինիստրներ են, 20 հատը ծիրակոյտի անդամներ, և 17 հատը երեսփոխաններ:

Այս Մասնախմբին կազմակերպութեան լուրը հռչակուելուն պէս, մեր «Paris Nouvelles»-ի գործակալութիւնը հեռագրեց իւր Նիւ-Յորքի հեռագրական Մասնաճիւղին, ուր մեր ներկայացուցիչը լուր տուաւ Պօէրներու պատուիրակներուն որոնք այժմ Նիւ-Յորքի մէջ կ'աշխատին իրենց հայրենակիցներուն համար: Պ. Ֆիշըր յանուն պատուիրակներուն շնորհակալութիւն յայտնեց ի Paris Nouvelles-ի ներկայացուցիչին Ֆրանսացի այն յայտնի մարդկանց համար որոնք յիշեալ Մասնախմբը կազմեց են:

A. Saissy և Մ. Ս. ԴԱԻԻԹ-ԲԷԿ.

ՊԱՏԵՐԱԶԱՐ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՆԵՏ

Պէրլինի Վօրլերն լրագիրը հրատարակեց Բրօք. Ֆէրդէրի մէջ յօդուածը, որով կը ձգտի բարեկամական կարգադրութեամբ մը վերջացնել Եւրոպական Տէրութեանց ու Չինու միջև եղած վէճերը: Բրօքէսօրին կարծիքով, պէտք է օգտուի Լի-Հուսկ-Չանկի ծանուցեալ միջամտութիւնէն, զոնացուցիչ արդիւնքներ ձեռք բերելու համար: այս կէտին վրայ: Վաղեմի Լին, որ լաւ կը ճանչնայ Եւրոպան, կացութեան անվիճելի մարդն է Վօրլերնի յօդուածը կը յաւելու թէ՛ Չինու հետ պատերազմը թեթեւօրէն ընդունելու չէ: Մինչև. հիմայ դիւրութեամբ սարուած յաղթանակները, նոյնիսկ ձաւառները, անհաւասար կուտի մը հետեւանքն եղած են, եւրոպական Տէրութեանց ու Չինու միջև. բայց այսօր բովանդակ Չինացի ժողովուրդը տաքնապի մէջ է, 500 միլիոն բնակչութեան մը զէմ պատերազմ մը՝ մէկ երկու ձևաւատամարտով չը կրնար վերջանալ. դժուար է անոր ելքը կանխատեսել:

Ամերիկացուց հանդիպած դժուարութիւնները փրկապիւններու մէջ, բաւական յստակօրէն կը հաստատեն թէ՛ ինչ՝ պիտի ըլլայ Չինական պատերազմի մը հետեւանքը, կ'երգրակայնէ Բրօք. Ֆէրդէր:

ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — Տեյլի Նիւսի Հոռոմի թըզ-թակիցը լուր առած է եղեր թէ՛ տէրութիւնները՝ Ունամակա-կայսրութիւնը քանդակեցութեան եւ տէրութեանց հսկողութեան ներքեւ Բէքինի մէջ անօթամանակեայ կառավարութեան մը ձեւին վրայ խորհրդակցութեան մտած են:

Միացեալ Նահանգաց կառավարութիւնը կ'առաջարկէ երիտասարդ կայսրը վերահաստատել եւ անոր տալ նախարարներ, որոնց բարի կամեցողութեան վրայ տէրութիւնները կարենան վստահիլ:

Ուրիշներ ալ կ'ըսեն թէ՛ Տէրութիւնները կը փափաքին ձաւառի պաշտօն տալու: Չինաստան 20-40000

մարդ թափուլ, որոնք սպասուած թիւները կարենան խեղդել:

Միւս կողմէ, Տեյլի Մեյլի Եօթնամայի թղթակիցը կը հեռագրէ.

«Կ'իմանամ թէ՛ ձաւառական կառավարութիւնը Տէրութեանց նեկայացուցիչները հրաւիրած է զետպա-նաժողովի մը, իրեն հետ վիճարանելու թէ՛ ձաւառն ինչ՝ զիր, պէտք է բռնէ Չինական ներկայ տագնապին մէջ:

Սակայն, Տեյլի ԹեթիկրաՅ ալ հաւաստի ազդուրէ կը տեղեկացնէ թէ՛ Տէրութիւններն երբեք զիտուարութիւն չեն ունեցած Չինաստանի մէջ խաղաղութիւնը վերահաստատելու պաշտօն տալու ձաւառին:

ԹՈՒՐԲԻՈՅ ԳՈՐԾԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԲԵՐԸ. — Կ. Պոլսոյ Երիտասարդ Թուրքերուն ազատական Մասնախմբը՝ զեսպաններուն յայտարարութիւն մը տուաւ Յունիս 25 ին, նկատարելով Թուրքիոյ կացութիւնն ու յայտարարելով թէ՛ ժամանակն է որ Տէրութիւնները վերջ դնեն Սուլթանին վարչութեանը:

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՒ Բ. ԴՈՒՌԸ. — Ամերիկեան զեւպանտան Գործակատարը՝ Դրան ծանուցադրեց իր ներկայացուցիչը որ անմիջական պատասխան մը արուի Ամերիկեան կառավարութեան, Հայկական ջարդերուն ատեն Ամերիկեան հպատակներուն կրած կորուստներուն համար տուգանքի խնդրին կարգադրութեանը մասին:

Թէ՛ եւ ազգու ոճով խմբագրուած, ծանուցադրեց չը կրնար վերջնազրկ մը համարուիլ, սակայն ոչ՝ նուազ հասկանալի է թէ՛ Ամերիկեան կառավարութիւնը դիտարարութիւն ունի միջուկ իրերը մինչև ծայրը:

ՍՈՒՐԻԱ-ԱՐԱՐԻԱ. — Սուրիան ու Հիւսիս, Մէտի-նէ ու Մէքքէ սուրբ քաղաքներն իրարու կապելու սահմանեալ երկաթուղիին ու հեռագրական թելի մը յատակադիր կը ճշդուի Գիծը տի սի միկին Դամասկոսէն, սիտի հաղորդակցի Սինայի թիւրակղզիին, Ալգալայի քով, եւ ամբողջ Հիւսիս կարելի վերջ՝ պիտի անցնի Մէքքէն ու Մէտիին, առ այժմ վերջնապէս համար ՚ի ձիտտէն: Յետոյ, գիծը պիտի երկարի մինչև Եմպոյ: Երկու թիւնը ծախքերը 10 միլիոն օսմ. սոկի կը հաշուին:

Եւ որովհետեւ կրօնային երկաթուղի մ'է այս, միւս-լիմաններ պիտի բանին: Թուրք երկրաշարժներու սպա-նիք պատրաստած են յատակագիրը:

Նախապատրաստական աշխատութեանց համար միւսին 26 վայրաշարժներ պիտի շինուին ՚ի Գերմանիա, Օսմանեան Մովակալութեան Գործարաններն ստանձնած են ամեն օր 5000 ախան մէթր երկաթի զիծ պատրաստելու: Այս արտակարգ երկաթուղին 35 կայարան պիտի ունենայ եւ շուրջաւերը 18 օրուան մէջ պիտի ընեն ճամբորդութիւնը, վառն զի գիւնները չ'պիտի բանին եւ ուղևորներուն ժամանակ պիտի տրուի իրենց բարեպաշտական պարտականութիւններն ընելու: Կը վախճուի սակայն որ արաք հզօր ցեղախուժները թուով 100 հազար, որոնք դարեւ ՚ի վեր Դամասկոսէ Մէքքէ փոխադրութիւններն իրենք կ'ընեն, չ'ըլլայ թէ այս վնասաբեր երկաթուղիին շարունակութիւնն արգիլեն: Եիւ-իւ-իւ-լամը, նախարարներու վերջին խորհուրդին մէջ ծանր երկիւղներ արտայայտած է երկաթուղիին շինութեան

առթիւ: Մասնաւորապէս հասկցուցած է թէ՛ Թուրքիա ծաղրելի պիտի ըլլայ բովանդակ Իսլամին առջեւ, եթէ չ'կրնայ գլուխ հանել սկսած զործը: Նախարարները որոշած են վեց ամիս 10 Օյ զեղջիլ պաշտօնեաներուն եւ սպաներուն ամսականներէն, որպէս զի զիւրացնեն երկաթուղիի շինութիւնը: Այս կերպով կը յուսացուի 1 միլիոն օսմ. սոկի գումար մը գոյացնելու:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՐՈ. 30 Յունիս. — Մովակալութեան խնդրանաց վրայ, Աւստրալիոյ նաւատորմին 3 մարտանաւեր Չին կ'երթան:

Լորտ Բոպթը Քրէթորիայէն կը հեռագրէ Յունիս 29ին. «Պօէրները յարձակեցան Լինտլի գացող զօրախմբի մը վրայ, որ կրցաւ հասնիլ Լինտլի. թշնամիին եւ յառաջապահ գնդին միջև կատաղի պատերազմ մը վերջ: Մեր կորուստներն են 10 սպաննուած եւ 50 վիրաւորուած:

Ս. Է. Սէյմուր ծովակալը Շիֆուէ կը հեռագրէ 29 ին. «Հրամանատարութեան ներքեւ դատուող զօրքերը գերմարդկային ճիղեր թափեցին Բէքին հասնելու համար, հակառակ թիւին անհաւատարմութեան եւ անընդհատ ու աղղու ընդդիմութեան:

Պատերազմական նախարարութիւնը (War Office) հետեւեալ հեռագիրը կը հրատարակէ, Յունիս 30ի առաւօտուն Շէֆուէ քաղաւ. «Դաշնակից ուժերը 27 ին զբաւեցին թիւն-Չինի հիւսիս-արեւմուտքի նաւարանը»:

Թագուհին Ն. Բ. Ստիվին ընծաւեց Վիկթորիայի կարգին Մեծ Խաչը, Մուհամմէս Ալի իշխանին ալ Ս. Միչէլ ու Ս. Ժօրթի կարգին Մեծ Խաչը:

ՆԻՒ-ԵՕՐԻ 30 Յունիս. — Ամերիկեան «Օրէկոն» զբահուրը խրեցաւ Շէֆուէի հիւսիս-արեւմտեան կողմը Հու-Բի կղզիին խարակներուն վրայ:

ԼՈՆՏՐՈ. 2 Յունիս. — Կիլոմ կայսրը հրամայեց որ նաւատորմի բաժին մը պատրաստուի մեկնելու ի Չինաստան:

Ն. Բ. Ստիվը ճաշեց այս իրեկուն Կալէսի իշխանին ու իշխանուհիին հետ Մարլբորոյ Հաուս:

ԲԱՐԵՁ 30 Յունիս. — Ն. Բ. Ստիվը պիտի մեկնի Անգլիայէն:

Սորհրդարանն ընդունեց ծովային ուժն աւելցնելու անաջարկը:

ԼՈՆՏՐՈ. 1 Յունիս. — Մովակալ Պրուս, Յունիս 30ին Շիֆուէ կը հեռագրէ թէ՛ մինչև այսօր ցամաք ելնող զին օրական ուժերու թիւը կը հասնի 520 սպաներու եւ 13500 մարդու:

ԵԱՆԿ-ՀԱՅ 1 Յունիս. — Շիֆուէի սնդիլական հիւպատոսը կը հեռագրէ թէ՛ Բէքինի գերմանական զեւպանը Յունիս 18ին սպաննուած է չինական զօրքերէն: Միւս զեւպաններուն կացութիւնը յուսահատական էր 26 ին: Կայսրուհին անկարող էր երկար ատեն զանոնք պաշտպանելու:

ԲԱՐԵՁ 2 Յունիս. — Բէքինի մէջ Եւրոպացիներուն կացութիւնը յուսահատական կը համարուի:

Գերմանական զեւպանը փոքոցին մէջ սպաննուեցաւ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԿՆՈՐԱԸ

- Ինչու, հոպիս. գու. գործ չ'ունիս, պառկէ՛, հանգիստ ըրէ՛:
- Ինչ է ատ գործը որ քեզի կ'ստիպէ զիշերով գուրու կլլելու:
- Գառնիկ նեղուելու կ'սկսէր:
- Նախ գիշեր չ'է, անա՛ արշալոյսը. պատասխանեց մի քիչ սաստկօրէն. յետոյ գործը քեզի հասկցնելու ժամանակ չկայ:
- Ինչու պոռալով կը խօսիս, գոչեց Մարիամ՝ որ կարծես թէ աներեւոյթ զօրութեան մը կը հնազանդէր. երթալ կ'ուզես՝ գնա՛ բայց սուտ մի՛ խօսիր, ես գիտեմ այդքան կանուխ կլլելուդ պատճառը:
- Գառնիկ՝ որ կ'աճապաբէր եւ ժամաւաճառ ըլլալ չ'էր ուզեր՝ ուսերը ցնցեց եւ
- Անա կ'երթամ, ըսաւ գուրու կլլելով եւ գուրը գոցելով:
- Ինչ պիտի ուտես այսօր
- Մտազբաղ եւ անապարող մարդու մը այսպիսի հարցում մ'ընել, անոր միտքը ցրուել եւ մտածումը մէկդի թողով երկրորդական խնդրոյ մը վրայ երկուսը բարակ բանակցութեան մտնելու հրաւերել է:

Գառնիկ որ պատճառ ունէր այս հրաւերին չ'անսալու, ինչ որ կ'ուզես երե՛, պոռաց սանդուղէն:

Քիչ յետոյ Մարիամ լսեց փողոցի զոռն գոցուիլը, եւ միմալով միւս կողմ դարձաւ, բայց չկրցաւ քննալ:

Ե

Գառնիկ չ'այտնեցաւ: Ինք երբ ծովկերք հասաւ, Գարրիէլ մակոյկով հեռացած էր արդէն: Սորհեցաւ սուռն վերադառնալ բայց մտածեց թէ՛ գուրը բանալու համար արթնցնել Մարիամը՝ որ հարկաւ վերստին քնացած էր՝ եւ թերեւս պզտիկներուն ալ արթնալուն պատճառ ըլլալ չ'էր արժեր: Աւելի լաւ էր ինքն ալ իր գործին երթալ:

Ուստի մակոյկը կապող չուանը քակեց, թիւերը շարժեց ուժղապիլ եւ հեռացաւ:

Ճակատագրապաշտը անշուշտ պիտի պնդէր եւ երկու երկու ալ չորսի համեմատութեամբ պիտի հաստատէին որ այն օր յատկապէս Գառնիկին եւ իր ընտանեաց համար շարագէպ օր մ'էր:

Ձկնորսը, որ սովորաբար կէսօրին սուռն կը վերադառնար լեցուն մակոյկով, մինչև կէսօր ոչինչ կրցաւ որսալ: Հետեւաբար՝ խոժոռագէմ՝ կը շարունակէր ուսկանը նետել: Քիչ մը ետք մեծ անօթութիւն զգաց, բայց ուտելու բան մը չ'ունէր:

Մինչ այսպէս ձուկերէն ծաղրուած, արեւէն այրած, անօթութենէ սանջուած զեւ կը ջանար ունայնաճեմն

եւ չ'զգոնալ, յանկարծ ուսկանը մեծ ծանրութեան մը տակ քաշուեցաւ եւ յետոյ մէկէն թուլցաւ: Իսկոյն վեր քաշելով աւտաւ. որ պատճառ էր՝ անտարակոյս անագին ձկան մը տապալուքներէն:

Իրկին է երեւակայն Գառնիկին բարկութիւնը: Նա թերեւս առաջին անգամ ըլլալով քերտը բացաւ եւ անայնները խցեց: Եւ որովհետեւ անոր ըսածները ծովուն մէջ խայտապող ձուկերը միայն լսեցին, եւ որովհետեւ ձուկերուն լեզուն տակաւին ուսուճասիրուած չէ՛ ինչպէս կապիկներունը՝ Գառնիկին այն խօսքերը մեզի չկրկնեցան:

Մոայն սա կայ որ ձկնորսը ինքն իրմէ կլած, աւրին յրտինքի մէջ մնացած՝ գէպ ի ծովկեր կը վերադառնար սուռն երթալու համար, ճամբուն վրայ հանդիպեցան Գարրիէլին, որ ճիշդ այն միջոցին շիշի մը յեան կաթիլը կուլ կուտար:

Գառնիկ՝ առանց նախաբանի՝ մէկ շարժու հաշիւը պահանջեց. Գարրիէլ խնդալով պատասխանեց որ ճիշդ շարժէ մ'ի վեր գործը ձախող կ'երթար. միայն այն պահուն երկու քաշի չափ ձուկ ունէր, զոր ծախելով՝ տուր կտոր մը հաց տանիլ կը խորհէր:

Գառնիկ՝ որ գիտէր թէ՛ միւսը կը տէր՝ կծու պատասխան մը տուաւ՝ որուն աւելի կոշտաբար պատասխանեց Գարրիէլ: Պատասխանէ ի պատասխան գործը այնքան տաքցաւ որ Գառնիկ թիւրուն մին վերցրնելով պիտի լիջցնէր իր ընկերին զլիտուն, երբ թիւն վեր կած ծայրը բռնեց ուրիշ ձկնորս մը, որ կը կենար նաւաւտոցին վրայ, ուր հասած էին առանց գիտնալու:

երբ որ կ'երթար Չունկ-Լի-Նամէնի ։ Զօրավիզ արշա-
ւախումբը զեռ չմեկնեցաւ Դիէն-Չինէ ։
Կացուցիւնը ծանրակշիռ է Շիֆուշի եւ Շանկ-Հա-
յի մէջ ։

ԼՈՆՏՐԱ 3 Յուլիս. — Դիէն-Չինի հիւպատոսները
միաձայնութեամբ կը յանձնարարեն Տէրութիւններուն,
կայսերական գերատեսչին նախնեաց գերեզմանները
քանդելու սպառնալ իբրեւ միակ միջոց ազատելու օ-
տարականները ։

Գերմանական Մովակալը կը նուագրէ թէ՛ Բէրլինի
մէջ չինական քաղաքն այրուեցաւ ու կայսրուհին
փախաւ ։

ԿՈՒՉԷ՛Ք ՈՒՆԵՆԱԼ ՈՍԱԿԻ

ԿՈՒՉԷՆ ԼԱՐԻՈՂ, ԽՐՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ԺՍՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄԻԱՅՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐՆԼՈՎ

ԴԻՄԵՑԷ՛Ք

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍՔԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաեւ ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյց-
ներու ամենազերամատչելի գններն սկսելով մինչեւ
ազամանազարդ ։ Արձաթ ժամացոյցներ 50 զրուէն
սկսեալ նիքէլ որսնիթուա ժամացոյցներ 22 զրուէն
սկսեալ. նաեւ Ոսկի, արծաթ եւ ոսկեպատ չըզ-
թաներ եւ գոհարեղէններ, ինչպէս նաեւ սպտի եւ
քոնաղի բազմազան բանտիւրներ ։

Ամերիկեան նիքէլ ժամացոյցներ, զբանդանի յա-
տուկ, 10 Ղրուէի անհատաւորի գնոյ փոխարէն, որոնք
լաւ կ'ըմանին ։

Ուրեմն դիմեցէ՛ք ուղղակի ։

ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

Ա. Զ. Գ.

Յաւօք սրտի կը յայտարարենք թէ՛ Ընկե-
րութեանս Ընդ.Ն. Ժողովոյ անցեալ կիրակի Յու-
լիս 1ի արտակարգ նիստը տեղի չ'ունեցաւ, Ըն-
կերութեանս Պատ. անդամներէն ներկայից թիւը
մեծամասնութիւն չ'ընդացնելուն պատճառաւ ։

Արդ, Դիւանս կը փութայ ազդարարել թէ՛
արտակարգ նստի մը գումարման սլլ ես հարկ
չ'տեսներ, նկատելով ոչ մէկ ամիսէն տարեկան
ընդհանուր ժողովը պիտի գումարուի ։

Ի գիւմայ Մայր-Դիւանի

Լսարան-Ընկերացաւուն Ընկերութեան

Ատենապետ

Ա. ՊԱԼԵԱՆ

4 յուլիս 1900.

Այս կերպով Գառնիկ փոխանակ իր սովորական
տեղը՝ սան դիմացը՝ տանելու մակոյկը, նաւամատոյցը
տարած էր. եւ սակայն Մարիամ կ'սպասէր պատուհա-
նին առջեւ ։

Հարկ եղաւ կոտորել շարժառիթը հասկնել նաւա-
մատոյցի վրայ խոնոտած արճեատակիցներուն, որոնք
ինդիքը արգարութեամբ եւ աշարժութեամբ դատելու
կարող ըլլալու համար երկու ոտոյնները հրաշխեցին
իրենց հետեւել Եանիին գինետունը ։

Զկնորաներուն մեծամասնութիւնը՝ որ կը բաղկա-
նար աւելի տարիքոտներէ՛ կը յարգէր Գառնիկը, հա-
մոզուած ըլլալով սնոր ճշմարտախօսութեան եւ գովելի
գտնելով սնոր վարքը ։ Իսկ երիտասարդները, որոնք
կը նախանձէին մեր ձկնորսին տրուած գովեստներուն
վրայ, անհատաւորիմ ընկերին կողմը կը բռնէին եւ
կ'աշխատէին Գառնիկը նուաստացնելու ։

Վատասիրտ մարդոց յատկութիւնն է, զէսլ՝ իրենց
քաշել այն բարձրաթիւնը՝ որուն հաւասար չեն կրնար
կամ չեն ուզեր բարձրանալ ։

Երկու դատավարները լուռեցան եւ յանկարծակարգ
դատաւորները՝ հակառակ Գառնիկին հակակիրներուն
համեմտալ փաստաբանութեանց՝ ի նպաստ վերջնոյն
առին իրենց վճիռը ։ Գարբիէլ գատապարտուեցաւ ութ
օրուան հատոյթին կէսը վճարելու, առանց ասոր համար՝
գինետան մէջ եղած ծախսերէն անպարտ արձակուելու ։

Սոյն գործողութիւնը՝ զոր մի քանի տողով բա-
ցատրեցինք, իրապէս երկու ժամէն աւելի տևեց, եւ

ՆՈՒՐԱՏՈՒՆՈՒ ԻՒՆԷՔ

ԳԱՀԻՐԷ. — Տիար Սահակ Գիւրքէի Եսայեանէ
մէկ օրինակ Վէպիկներ էն,՝
Ռաֆֆի ։

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՄ. — Տիար Տօղգ. Էնֆիլէ-
ճեանէ. քանի մ'ազգայիններու կողմէն Գեղար-
ուեստի գրքոյկին համար Ղր. Ողջ 80 ։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՊՏԻՆԵՐՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԲԸ, Գահիրէի Ս.
Մարկոս եկեղեցիին մէջ հրաւիրեց բոլոր Խըպ-
տիները, եւ անոնց հետ հրապարակային աղօթք-
ներ ըրաւ Խորվին կատարեալ առողջութեան
համար ։

ԿՈՄՍ ԼԱՄՍՏՕՐԾ. — Բէգրսպուրկէ կը գրեն
թէ՛ Կոմս Մուրալիէֆի մահուանէ հաբը, ար-
տաքին գործերու նախարարութիւնը վարելու
պաշտօնը տրուած է Լամսօրֆ Կոմսին ։

ԻՄՄԱՅԻԼ ԲԷՄԱԼ. — Կ. Պօլէն «Թայմզ»-ին
գրուած է թէ՛ պալատին հրամանով, Եանեայի
գինետրական հրամանատարը, յունիս 21ին երկու
Ալքանիացիներ զրկած է Եւրոպա, Իսմայիլ Բէ-
մալ պէյին ետեւէն Զ'գիտցուի թէ իրօք ի'նչ
պաշտօն ունին ասոնք, մինչդեռ չարագուշակ
զրոյցներ կը պտրտին քաղաքին մէջ ։

ԿՈՄՍ ԹՈՒՄՏՕԵԻ. — Մոսկուայէ կը գրեն.
Ռուսական Ս. Մինօքը վերջերս զազանի վճիռ
մ'արձակած է, որով կը բանադրէ մեծանուն
գրագէտ Թօլստոյի Կոմսը. Յարութիւն (Resurrec-
tion) գրքին մէջ երեցած ոգին ու հակումները,
կ'ըսէ Ս. Մինօգի վճիռը, բացայայտօրէն կը
ցուցնեն թէ՛ այդ երկասիրութեան հեղինակը
պէտք է թշնամի նկատուի յունագաւան ուղղա-
փառութեան. Ռուսիայէն հասած հեռագիրներէն
կ'իմանանք թէ՛ Կոմս Լէոն Թոլստոյի այս ամառ
Փարիզ պիտի ճամբորդէ ։

ՏԱՐՃՈՒՐԻ ՍՈՒԼՈՒՆԸ, Այլ Պէն Տիւար,
պատգամաւոր մը զրկած է Մուստանի կառավա-
րութեան, զեկուցանելու թէ՛ վարուցանի համար
պէտք ունի մեծաքանակ ցորենահատի եւ թէ՛
ինք ունի շատ մը կովեր ու եղներ, զորս կրնայ
ձգել Մուստանի կառավարութեան ։

ՇԵՆ ԱՊՏՈՒԼԼԱՀ ԲԻԼԻԹԷՄ, որ Բրիտանա-
կան կղզիներուն Շեխ-Իւլ-Իսլամը կ'ըսուի, Լի-
վրուսի միկիթին մէջ Յունիս 20 ին աղօթքներ
ընել տուած է Ն. Բ. Խորվին առողջութեանը
համար, եւ հետեւեալ հեռագիրը զրկած է Նո-
րին Բարձրութեան ։

«Պիտանալ իրաւեանս ռանիմ ։ Բրիտանա-
կան միւլիմանները սրտագին բարեմաղթու-
թիւններով կ'ողջունեն Ձեր Բարձրութեան գա-
լուստն յ'Անդղիա, եւ այսօր միկիթին մէջ աղօթք-
ներ կատարուեցան Ձեր արագ ապաքինման
համար ։»

Շաֆիգ պէյ յանուն Խորվին շնորհակալեաց
հեռագիր մ'ուղղեց Շէյխ Ապտուլլահ Բիլլիյէմի ։

ԶԷՆՕՎԻՃԵ. — Կ. Պոլսոյ ռուսական դես-
պանը Յունիս 23ին Աթոս լեար գնաց, ուր ներ-
կայ պիտի գտնուի ռուսական եկեղեցիի մը եւ
վանքի մը բացման հանդիսին ։

ԿԱՌԱՓՆԱՏ. — Կոմսա Իպրահիմ անուն
մէկը գլխատուեցաւ երեկ առտու Ֆէյուսի Էթաս
գիւղը ։

ՓԼՈՒՉՈՒՄ. — Տուն մը փրաւ առջի օրը Խա-
լիֆա թաղին մէջ ։ Երեք գիւղացիներ տակը մնա-
ցին սպաննուած, եւ ուրիշ երկու մարդ ծանրա-
պէս վիրաւորուած. ուրիշ երկու բնակիչներ ողջ
մնացած են ։

ԿԱՌԱՂԱՆ. — Գանի մ'օրէն Գահիրէի մէջ
պիտի կախուի Ապտէլրահման Պէյ Էլ Ատի սպա-
սաւորը, Այի Ահմէտ, որ տեղական վերաքննիչ
Ատենին կողմէն դատապարտուած է կախաղանի,
Սայտա Զէյնապի մէջ, իր ախրով սպասուհին
սպաննած ըլլալուն համար. Պապ-Էլ-Խալիֆ հրա-
պարակը պիտի կախուի. այսօր կորոշուի մահա-
վճառին գործադրութեան թուականը ։

ՀԵՐԿՈՂ ՈՒՂՏԵՐ. — Գերմանիոյ մէջ Բոզէն-
ցի հարուստ հողատէր մը վերջերս սկսած է
ուղտերով հերկել իր դաշտերը ։ Կարծենք թէ
առաջին անգամն է որ այս փորձը կը կատար-
ուի Եւրոպայի մէջ. Անգլո-Հոլանտի հողագէտներն
ալ հետեւած են սոյն օգտակար օրինակին. Արգէն
ստացուած արդիւնքները ցոյց կուտան թէ՛ ուղ-
տերը, սակաւապէտ ու տոկուն ըլլալով՝ ձիերէն
երկու անգամ աւելի գործ կ'արտադրեն, եւ
եղներուն վրայ ալ առաւելութիւն ունին մանա-
ւանդ մնունդի տեսակէտով ։

Յիշեալ հողատէրը բերել տուած է Ալճէ-
րիայէն ուրիշ 3 զոյգ ուղտեր, զորս կը գործա-
ծէ օգտակարապէս ։ Կրացի մէջ ալ ուրիշ ագա-
րակատէրներ կը հետեւին անոր օրինակին, այն-
պէս որ արեւելեան Գերմանիոյ մէջ, ուր երկ-
րագործութիւնը միակ հարստութիւնն է, քիչ
ատենէն պիտի ընդհանրանայ հերկելու այլ նոր
կերպը ։

ՏԻՎԻՆ ԿԼԱՏՈՒՆ. — Պ. Կլատսթոն թաղուած
էր Ուէսթմինսթըր, վախճանեալ պետական մար-
դերու գերեզմաններէն մէկուն մէջ, այն մար-
դերուն, զորս Անգլիա գերագոյն պատուոյ ար-

Այս եղաւ «բաժակին յետին կաթիլը» ։
Յանկարծ Մարիամ տեղէն ցատկեց եւ ծաղիկները
ժողովելով՝ պատուհանէն փողոցը նետեց ։

Գառնիկ՝ որ կը պատրաստուէր գանձաք դարձեալ
գաւաթին մէջ դնելու՝ շուարած մնաց, եւ Մարիամին
թէ՛ կեցուածքէն եւ թէ՛ կտիւն նայելու. կիրպէն հաս-
կցաւ որ սովորականը չէ ։ Ուստի ինքն ալ յօնքները
պոստեց եւ,

— Ի՞նչ ունիս, ծաղիկները ինչո՞ւ նետեցիր, հար-
ցուց խիստ ձայնով մը ։

Կինը չպատասխանեց ։

— Բեզի կ'ըսեմ միթէ՛ չե՞ս լսեր, կրկնեց ձկնորսը ։

— Ի՞նչ է, ի՞նչ կայ կը պոստա ըսաւ Մարիամ՝ խո-
ժողովէմ ։

Գառնիկ ակոսները կը կրճատէր ։

— Բեզի հարցուցի թէ ծաղիկները ինչո՞ւ նետեցիր,

ըսաւ գինովի յամառութեամբ ։

— Կամքս անանկ ուզեց ։

— Կա՞մք . . .

— Այո՛, ըսելիք մ'ունի՞ս ։

— Ոչի՞նչ, պատասխանեց Գառնիկ եւ գնաց բազ-
մոյին վրայ նստաւ ։ Կարճատեւ լուռութենէ մը ետք.

— Սեղանը պատրաստէ՛ ուտենք ըսաւ ։

— Ուտելու բան չկայ ։

— Ի՞նչպէս ։

(Շարունակելի)

քանի դատած է: Իսկ Տիկին կլատթանի, իր հաւատարիմ և անձնուէր ընկերուհիին դազալը ճիշդ իրենին քովիկը դրուեցաւ Յունիս 19ին:

Յուզարկաւորութիւնը պարզ, բայց հանդիսաւոր եղաւ. ներկայ էին Ազատական կուսակցութեան բոլոր երեւոյի անձնաւորութիւնները: Տիկին կլատթանի երեք որդիները, սգակիր, առջեւէն կ'երթային:

ՖէրՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆ. — Պուկարիոյ իշխանը նոր Ուրազ մ'արձակեց Մամոյ սպասուածեան դէմ, Սահմանագրութեան 47րդ յօդուածին ու ժողով Ասիա առաջեկած է իր անձին դէմ հետզհետէ ուղղեալ ուժգին յարձակումներէն: Այսուհետեւ յօդուածի մը հեղինակն ու տպագրիչը պատասխանատու պիտի ըլլան թերթին արտօնատիրոջը պէս:

ԽԱՐԹՈՒՄ. — Սուտանի կառավարական պաշտօնատան շինութիւնն ամբողջապէս պիտի աւարտի յառաջիկայ Հոկտեմբերին:

ՄԱՐՍԱՏՈՒՆԸ. — Ազգ. քառորդի լրագիրները կը դրեն թէ՛ Մարտատանց Ընդհ. տնօրինութիւնը մտտերս պիտի տեղափոխուի Գահիրէ:

Գիտենք արդէն որ ծովեզերապահաց (garde-côtes) տեսչութիւնը Գահիրէ պիտի հաստատուի յառաջիկայ նոյեմբերին:

ԱԼՄՈՒՅԵԱՆՏ. — Կ'իմանանք թէ Բ. Գուռը հեռագրով ծանուցած է մեր պաշտօնակից Շեյխ Ալի-Եւսէֆի որ « Ալ-Մուսայեսաթ » երկու հրատարակութիւնները, արարելէն ու ֆրանսերէն, ազատ մուտք պիտի ունենան ի Թուրքիա:

Ծանօթ է արդէն որ Շեյխ Ալի Նեմ' շատագոյն է Խալիֆայութեան: Ահա՛ւասիկ վարձատրութիւն մը, որուն իրաւամբ արժանի է Ալ-Մուսայեսաթ, աշխարհիս բոլոր մասերուն մէջ մահմանականութեան շահերը պաշտպանելուն համար:

Թ Ե Ո Փ Ի Լ Ո Ս

Թէոփիլոս տիպար ընչաքաղցութեան, թէև գաւառացիի զաւակ ' ի Կ. Պոլիս ծնելու գործարարութիւնն ունեցած է գրեթէ ասիկց 45-50 տարի տոաջ:

Որովհետև անկարելի է իւր ֆիզիքական ու բարոյական նկարագիրն ըստ կարելւոյն ճշգրիտ կերպիւ ուրուագծել, ընթերցողին կը յանձնարարենք Հիւկօյի ժամէրին մէջ զետեղել Մօլլէրի շարքակօնը:

Միեւնոյն կոչտ հասակը, սլուկօկի քիթը, թանձր չրթներ ու միշտ պզգանքի ցուրտ տպաւորութիւն ընող այլանդակ բերանն ու նայուածքներէ խոստովող խոռոչացեալ փոքր աչքերը . . . վերայպէս սգեղութեան տիպար մը, տիպար՝ որ առաջին անգամ զայն տեսնողին վրայ պիտի թողուր ազդու մարտդականի մը տակ ընկճուողի տպաւորութիւնը . . . :

Թէոփիլոս արդի առեւտրական հրապարակի վրայ անուն ունեցող հայ վճառականներէն մին կը նկատուի, եւ ասոր իբր վկայ կանգնած է համանուն «խան» մը ուր Թէոփիլոս փոխադրուած էր վերջերս . . . տասնեակ տարիներով գեանայարկ ու խոնաւ պոստով մը մէջ խուրդի պէս ապրելէ վերջ — անշուշտ վարձարին տեսնութեանը պատճառաւ — որոյ ի պատիւ խանգարած է իւր անպէտ առողջութիւնը, յողացաւի միայուն ակտով մը տառապելով:

Թէոփիլոս ամուսնացած է . . . թերեւս ժողովրդով այն առածը թէ՛ իւր կոչտ ու անզգայ մարդ մը կ'ամուսնանայ իւր հակապատկերն եղող գեղանի ա. դեռատի օրիորդի մը հետ, կը նմանի այն ազէտին՝ որ գիրք մը կը գնէ բարեկամացը կարգադրել սալու համար . . . Թէոփիլոս այժմ կ'գգայ զայդ, բայց երբէք չխոռվիր. . . բաւ է որ նիւթական սիւէ կորուստ չէ կարող յառաջ գալ այդ մարմնական առեւտուրէ . . . զի սկզբունքով ընդունած է թէ՛ Ազգ. Հայրենիք, Մէր, Պատիւ ու Անուն, բոլորն ալ բովանդակուած են հեծեայ սուրբ Գէորգ. ներուն մէջ . . . և թէ ամեն միջոցներ՝ որք անոնց յաւելմանը կը նպաստեն՝ արտօնեալ ու ներկի են:

Աշխարհի վրայ միակ բանն որ սոսկում կ'ազդէ Թէոփիլոսի արդի զարգացեալ ու գիտակից երիտասարդութիւնն է, ուստի միշտ կը խորշի անոնց ներկայութենէն, բայց, երբ բաղդը այնպէս բերէ որ մեր մարդը չըջապատուի անոնցմէ, ա՛լ լսելու է անոր ազգայնական քարոզները « . . . դուք տահա ճահիլ էք,

ճահիլ . . . ծերին տահա խունտախ եղած վասիթը ես ասանկ գործերուն մէջ նէի . . . աշխատեցանք, չապաւառիչ էրանք, պօ՛լ պօ՛լ տուինք — ի՞նչ է արդեօք տուածը — մեզի մատով կը ցուցնէին ամա, ի՞նչ ֆայտա ունեցաւ . . . հի՛չ. գարաւըն էլինտէ գայտը . . . արթիւն էրթումըրած էմ քի ասանկ գործերու չը խառնըվիմ, ինծի ցուցուցէք հարուրին տոխտանը իննուկէս ֆայտալը գործ մը, էմնիլէթլի ընկերութիւն մը, պանէ կործէ հասկցող փիշիկին մարդ մը, անվասիթը տեսէք քի Թէոփիլոսը ինտոր թիւերը սօթած գործին ստըլմըջ կ'ըլլայ, ինտոր քէսէին պերանը կը պանայ . . . մէյ մըն ալ անուն կըրծի էն հաներ . . . թէօպէ՛ մննծ խօսքիս, էյէր քիչ մը տուղուսըզ ըլլայի նէ՛ հիմակ աս հալը չէի մնար . . . »:

Ինչպէս կ'երեւի, Թէոփիլոս նոր Գիտցինէսի մը հողերն ունի. իւր կարծիքով՝ հանրութիւնը մոլորեալ հօտ մ'է, ամեն ընկերութիւն՝ դրամակուլ ու ամեն Հայ՝ խաչագող. իսկ ի՞նքը, — այս ամենուն մարմնացուծը . . . :

Տակաւին մօտ առնենք ի Կ. Պոլիս ունեցած մէկ դատին անյաջող ելքէն սաստիկ զայրացած, անիծելով շէրիի դատարանը՝ որ միտած էր կայստքն ու բացառաբար ճշմարտութիւնն երեւան հանած, Թէոփիլոս փորձած էր չունըք Եգիպտոս առնուլ պահանջատիրոջ ձեռքէն պրծելու համար, բայց կ'երեւի չէր մտարբար թէ այդ ձեռքը մինչեւ հոս հասնելով վերստին իւր հոգտ օձիքէն պիտի բռնէր . . . խեղճ Թէոփիլոս, Մարբուա գաչարն զուրբուլամսրն:

Ըսինք արդէն որ Թէոփիլոս տիպար ժլատ մ'է հանաքարեղ ու նրբամիտ. մէկ իտեալ ունի միայն, այն է սօրեայ հայուետուամարտուն մէջ՝ մուտքերը իրտ առ իրտ լեցնել ու ելքին կողմը ճեղ-ճեղմակ ձգել, այս նպատակաւ չնայելով իւր պողպատէ ստամոքսին անդիմադրելի ուժին՝ ու իտած է շարաթիւրով. « Բամազան » յոնկ, հող չէ թէ այդ կերպով զգալապէս կը պահուի իւր 72՝ ժամանոց հոյակապ զանգուածը, ըստ վկայութեան կայարանի հակերը կ'առող կենդանարին, զի Պ. Թէոփիլոս քանի մը օրը անգամ մը սովորութիւնըրած է գաղտագողի կշռուլ այդ ձրի գործիքով:

Եթէ փորձենք Թէոփիլոսի այս կարգի սովորութիւններն ու շահատակութիւնները կարգաւ ծանօթացնել ընթերցողաց, պիտի պարտաւորինք զատ գրքոյկի մը հրատարակութեանը ձեռնարկել, ուստի այժմ միմիայն նոցա կարեւորագոյնները կը յիշենք:

Թէոփիլոս տեղս հասնելով իւր ամենաէական պահանջ՝ կ'որոշէ սենեակ մը վարձել. ուստի տեղացի Շիյա իլ հարսի մը օժանդակութեամբ զիւրամատչելի քնով մը կը յաջողի երեք սենեակներ վարձել, բայց ո՛վ դժբաղդութիւն, հազիւ թէ գոհունակութեան հառաչ մը սարդած է լայնախիտեկ բերնէն, երբ արտակարգ զիպուածով մը կը տեղեկանայ թէ՛ Աստղիսն տաճարներէն մին է վարձած տունը . . . Թէոփիլոս, հակառակ իւր ժլատութեան՝ կը պարտաւորի հրաժարիլ կանխաւ վճարած ամսականէն ու հետանալ այդ աժանագին ու դժուարաւ ձեռք բերած շէնքէն, քի՛ն տակէն մըրթմըրթով « . . . ուճուգ էթին չօրպասը տատարը օլուր »:

Գիտէ՛ք արդեօք թէ անտեսագէտն Թէոփիլոս այդ ի զուր վատնուած դրամը ի՞նչ միջոցներով նորէն շահեցաւ. ահա թէ ի՞նչ պէս. մեր մարդը նկատելով որ ամեն միջոցէի ճաշուն՝ 10 միլիէմի հաց հալիւ կը բաւէր իւր լայնածաւալ ստամոքսը յագեցնելու՝ որոշած է անէն տանիլ հացը, այսինքն գիշերուան մնացորդները, զորս սեղթի կտորի մը մէջ փաթեթած կէս օրին կը կարկակէ ձեռնայարգարին որպէսզի խորովէ այդ հացի կտորները որք չափազրիտական ամեն ձեւերն ու գծերը կը պարունակեն իրենց մէջ — այսպէսով Պ. տը Թէոփիլոս կը յաջողի զարմանել իւր վաթխունը զրուշի կորուստը, բայց այն նշանուոր գեղչէն՝ զոր կ'արժէ ընթերցողաց ծանօթացնել:

Տակաւին մօտ ժամանակներս Թէոփիլոս ճաշարանին մէջ ըստ իւր ամենօրեայ սովորութեան մածուն կիւրած ժամանակ, ուշը կը գրաւէ ուրիշ մածունակերի մը առաւելութիւնը, այսինքն անոր մածունին վրայ շաքար ցանուած ըլլալը. եւ ա՛լ աւելի յապուշ կը կըթի՛ կը կը տեսնէ որ մածունակերը ուէ է մասնաւոր վճարում չ'ըներ շաքարին համար:

Թանկարժ գաղափար մը, լոյս մը կը ծագի Թէոփիլոսի հակայ գանկին մէջ. կը կանչէ ծառան ու կը հրամայէ բերել իւր հաշուեհետորը, ուսկից ամենայն պաղարիամը 2 զր. 30 փր. կիջեցնէ, ու տեսարկը կը յանձնէ սեղանայարգարին. սա երբ կը հարցնէ թէ ինչ հաշիւ էր որ աւրեց, մեր հանձնարեղ հաշուագէտը կը պատասխանէ. — Եօղուտորն վրայ շէքէր ցանկնէ բարա կառնեւս. — Ոչ . . .

— Բէք աղէկ, ես քանի ամիս է քի հոս կուգամ կերթամ կոր. — Հինգ . . .

— Ամեն օր եօղուտ կ'ուսեմ կոր՝ չէնէ մի չեմ ուտեր կոր.

— Կուտես կոր . . . — Հիմակ նայէ աղաս, 5 ամիս կ'ընէ 150 օր, եւ նի 150 քուսէ եօղուտ, էկեր ամեն անգամս 4 տիրէմ շէքէր ցանես վրոնս՝ կընէ . . . 600 տիրէմ շէքէր, հիմակ քանի որ ստար վասիթէ օրմը պիւն շէքէր չեմ ուզած՝ ըսի է քի կոնակէս 600 տիրէմ շէքէր վաստրկեցաք, ամմա քանի որ իմ հսկարս է՝ օլաս ու կէս շէքէրզ կընէ 2 զր. 30 փր. իշտէ ան էր քի հիստղէս ինջայ . . . :

Այժմ որ Թէոփիլոսը բաւական ճանչնալու պատիւը ունեցանք, տեսնենք հիմակ թէ ինչով կ'զբաղի. զինք մօտէն ճանչցողները իսկոյն պիտի պատասխանեն. իւր Մանչեսթրեան հաստատութեան ընդլայնումը, սարաձուտը ճիւղաւորումն է իւր արդի իտեալը. այ՛ո, Թէոփիլոս որոշած է իւր հնարարեան ու մինչև ցարդ դրուած կարկըտաններէն 6 քիւր ծանրութեամբ կօշիկներ կրող կոչտ ոտներն երկարել Գահիրէի արուարձանները. բայց զուր ջանք, կ'երեւի թէ այդ այլանդակ ծանրութիւնը անգամաւուծած է իւր ոտքերը . . . ուստի ' ի բոլոր սրտէ կը մաղթենք որ նոր հաստթի աղբիւր մ'ալ գանէ, որպէս զի ազատի այդ արգիլիչ ծանրութիւնէն՝ ու Աւուսեպէկի պէս ոտներն միւէ Եգիպտոսի զանազան մասերուն մէջ:

ՎՐՈՅՐ

ԿԵՐԻՈՒԱԿԱՆ-ՎՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԵԻ
Հաստատուել 1 յունվար 1897
Հիմնադիր-Տեֆտէ
Ս. ԲԻՆՐԱՏ

Սոյն հաստատութիւնը փոխադրուած է այժմ Ապաին, և Յուլիս 1է սկսեալ՝ կ'ընդունի միայն գիշերօթիկ աշակերտներ, 13 տարին լրացուցած և գէթ նախնական կրթութիւնն ստացած:

Կ'աւանդուի հայերէն, ֆրանսերէն, և անգլիերէն. նաև, առեւտրական աշխարհագրութիւն ու տօմարակալութիւն, գործնական մէթոտով:

Ընդունելութեան պայմաններուն և ուրիշ մանրամասնութեանց տեղեկանալու համար գիմիլ կրթարանի Տեսչութեան, ՆՈՐ ՕՐ ի խմբագրատունը, Պազար Մուրուրի մէջ, թիւ 38 գրասենեակը, ուր Տնօրէնը կը գտնուի, բայ ի կիրաւրիէ, ամեն օր կէս օրէ ետքը ժամը 3էն մինչև 6:

ԱՒԱՆԴԱՍԱՐ (ԷՄԱՆԷԹՃԻ)
ԱՍՏԻԿ ԷՍՄԵՐԵԱՆ

ՇԱՐԷ ՄՕՀԱՄՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ ԷԼ ԽԱԼԻ, ԳԱՀԻՐԷ
Կ. Պալոյ մուսակալագուռի խմբուրից Բոլ Բոլ Թ 1

Կը յայտարարէ արգոյ հասարակութեան թէ՛ Կ. Պոլսոյ Պաղչէ Գաբու, Թաշխանի թիւ 26 վաճառատունը ընկող և երկար ժամանակէ ի վեր իր փորձառութեամբ և ուղղամտութեամբ բոլոր պատուաւոր յաճախորդաց վստահութիւնը գրաւող Էմանէթճի Աբրահամ էֆ. Պայթայեանի հետ ընկերակցութիւն մը կազմած է: Այսուհետեւ Կ. Պոլսէն Եգիպտոս և Եգիպտոսէն Կ. Պոլիս զրկուելիք ամեն տեսակ աւանդներ անկորուստ ու ապահով պիտի յանձնուին սահմանեալ տեղերին:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 1 ՅՈՒԼԻՍ 1900

8157	9745	885	4769	6384	2870
6250	9792	2946	5497	3046	9717
4045	1267	9321	5526	3870	1421
3227	9837	893	9574	435	620
		3726	700	1178	